ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 232– Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2025 թվականի հունվարի 10-ի N 5-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 22-ին կայացած նիստի N 16 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 61 /վաթսունմեկ/ քաղաքացիների՝ սոցիալական աջակցության նպատակով, հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 2 740 000 /երկու միլիոն յոթ հարյուր քառասուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-09-22 17:20:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ. սեպտեմբերի 22
ք.Իջևան